ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. սեպտեմբերի 14-ից 17-ը ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանի՝ Բոսնիա և Հերցեգովինայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**
   Վահե Հովհաննիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Քաղաք Սարաևո, Բոսնիա և Հերցեգովինայի Հանրապետություն, 2022թ. սեպտեմբերի 14-ից 17-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**
   Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ), Համաշխարհային բանկ (ՀԲ)

5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն ԱՄՀ/ՀԲ ընկերակցային խմբի հանդիպմանը՝ որպես ԱՄՀ-ի ու ՀԲ-ի կառավարիչների խորհուրդներում Հայաստանի Հանրապետության փոխկառավարիչ:

6. **Քննարկված թեմաները՝**

Ընկերակցային խմբի հանդիպման ընթացքում անդամ երկրների հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության ինստիտուտների բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից քննարկվել են ընկերակցային խմբի անդամ պետությունների համար կարևոր և առաջնային հարցեր, այդ թվում՝ ԱՄՀ-ի և ՀԲ-ի քաղաքականություններն ու ծրագրերը, եվրոպական և համաշխարհային տնտեսության առանցքային որոշ հարցեր:

Մասնավորապես, հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել համաշխարհային տնտեսության վերջին զարգացումներին, «COVID-19» համավարակի և որոշ տարածաշրջաններում ռազմական կոնֆլիկտների արդյունքում առաջացած ճգնաժամի հաղթահարման ուղիներին, քննարկվել են անդամ երկրներում ինֆլացիոն ճնշումներին

հակազդելու գործիքների հնարավոր կիրառությունն ու էներգետիկ անվտանգությանն առնչվող հիմնախնդիրները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

ԱՄՀ/ՀԲ ընկերակցային խմբի հանդիպման օրակարգը հագեցած էր ընկերակցային խմբի համատեղ նիստերով և թեմատիկ տարբեր ուղղվածություն ունեցող պանելային քննարկումներով, ԱՄՀ-ի և ՀԲ-ի, ինչպես նաև ընկերակցային խմբի անդամ երկրների բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանդիպումներով:

Հիշյալ հանդիպումների ընթացքում քննարկումներ են ծավալվել այնպիսի կարևոր ոլորտների շուրջ, ինչպիսիք են՝ համաշխարհային տնտեսությունը, միջազգային տնտեսական իրավիճակի զարգացումները, համաշխարհային ֆինանսական շուկաները, համաշխարհային ֆինանսական կայունությունը, ինչպես նաև համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Բացի այդ, ԱՄՀ-ի և ՀԲ-ի տնօրենների խորհուրդներում Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրենների կողմից ներկայացվել են վերջիններիս կողմից նախորդող տարում կատարված աշխատանքները, ուրվագծվել են հետագա անելիքները, այդ թվում՝ ընկերակցային խմբի անդամ երկրների միջև համագործակցության խորացման ուղղությամբ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպման ավարտին հայտարարվել է Մոնտենեգրոյի՝ ԱՄՀ/ՀԲ ընկերակցային խմբի 2023թ. հանդիպումը հյուրընկալելու մասին:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Recoverable Signature

X

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN VAHE 2903800432

22.09.2022թ.